ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

(ՔԱՂՎԱԾՔ)

Վանաձորի համայնքի ավագանու արտահերթ նիստի՝ կայացած 31.03.2017 թ.,

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Արտյոմ Գրիգորյանը, Մեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Արմեն Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Վահե Դոխոյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Խորեն Վարդանյանը և Արման Ափինյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Մեյրան Աղաբեկյանը և Արմենուհի Կյուրեղյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը,* Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Հրայր Պապոյանը,* համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.25-ին նիստը հայտարարեց բացված և շնորհավորեց ներկաներին 2017 թվականի ավագանու անդրանիկ նիստի կապակցությամբ:

Այնուհետ *Մ. Ասլանյանը* ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց քվեարկությամբ հաստատել այն :

Միաձայն՝ 15 կողմ, քվեարկությամբ հաստատվեց օրակարգն ամբողջությամբ , ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

2.Վանաձոր համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Վանաձոր համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 07-ի թիվ 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
(զեկ.՝ *Ա. Օհանյան)*

3. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի «Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 07-ի թիվ 55-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
(զեկ.՝ *Ա. Հովհաննիսյան)*

4. Վանաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2014թ. փետրվարի 04-ի թիվ 2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
(զեկ.՝ Ա. Ավագյան)

5. Վանաձոր համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին.
(զեկ.՝Վ.Դավիթավյան)

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու մասին.
(զեկ.՝ Կ.Սարոյան)

7. Վանաձոր համայնքի 2017-2021թթ. ինգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին.
(զեկ.՝Լ.Դավթյան)

8. Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին.
(զեկ.՝ Ա.Ավագյան)

9. Վանաձորի համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.
(զեկ.՝ Մ.Ասլանյան)

10. Տարոն-3 թաղամասի ՔՇՀ-11 թիվ 25 շենքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանների օտարման մասին.
(զեկ.՝ Է.Ավագյան)

11. «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպությանը գույքահարկի գծով արտոնություն կիրառելու մասին.
(զեկ.՝ Կ.Սարոյան)

12. «Լոռի-ջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ին շինություններ և հողամաս տրամադրելու մասին.
(զեկ.՝Ս.Աբովյան)

13. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասի.
(զեկ.՝ Ս.Աբովյան)

14. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին.
(զեկ.՝ Մ. Ասլանյան)

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Վանաձոր համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 07-ի թիվ 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

- զեկուցեց՝ աշխատակազմի քարտուղար *Ա.Օհանյանը:*

զեկուցումից հետո նիստը վարողը լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց ավագանու անդամներին: Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեց՝

Գայանե Քալանթարյանը՝ ավագանու անդամների նիստերից բացակայության վերաբերյալ:

Նիստը վարողը պատասխանեց ավագանու անդամի հարցին:

Արմեն Մատինյանն առաջարկեց քվեարկության դնել օրակարգի հարցը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում :

2. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի «Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 07-ի թիվ 55-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

- զեկուցեց ՝ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ *Ա. Հովհաննիսյանը:*

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին ՝

Սոխակ Մելքոնյանը՝ կանոնադրության և ՏԻՄ օրենքի համահունչ լինելու վերաբերյալ:

Արմեն Մատինյանը՝ համայնքի ղեկավարի երրորդ տեղակալ ունենալու հնարավորության մասին:

Հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել օրակարգի հարցը.

Քվեարկությամբ, կողմ՝ 15 կողմ, ընդունվեց որոշում :

3 ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2014թ. փետրվարի 04-ի թիվ 2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ ՝ *Ա. Ավագյանը:*

Զեկուցումից հետո հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ տվեց նիստը վարողը:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին ՝

Արմեն Մատինյանը՝ կուսակցությունների խմբակցությունների գործավարների կարգավիճակի մասին և այլ համայնքների հետ աշխատավարձերի մակարդակների համադրման վերաբերյալ:

Գայանե Քալանթարյանը ՝ համայնքի ղեկավարի անմիջական ենթակայության հայեցողական պաշտոնների դրույքաչափերի և տեխնիկական աշխատողների քանակի, ինչպես նաև հետագայում աշխատավարձերի բարձրացման հնարավորության մասին:

Խորեն Վարդանյանը՝ կառուցվածքային փոփոխության արդյունքում որոշ բաժինների գործառույթների և աշխատանքների ծավալների ընդլայնման արդյունքում դրանց ղեկավարների

աշխատավարձերի վերանայման հնարավորության և աշխատակազմի ողջ կազմի ու տեխնիկական աշխատողների թվաքանակի հարաբերակցության վերաբերյալ :

Արմենուհի Կյուրեղյանը՝ տեխնիկական աշխատողներ համարվող վարորդների և ծառայողական մեքենաների քանակների և բաժնի պետերի ու այլ համայնքային ծառայողների աշխատավարձերի համամասնության վերաբերյալ:

Հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրին նիստը վարողը և աշխատակազմի քարտուղարը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ձեռնպահ՝ 1 (*Ա. Կյուրեղյան*), ընդունվեց որոշում :

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին.

-զեկուցեց՝ Առևտրի և սպասարկման, տրանսպորտը համակարգող բաժնի պետ Վ.Դավիթավյանը:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* և *Արմեն Մատինյանն* առաջարկեցին զեկուցողին առաջին հերթին ներկայացնել տուրքերի և վճարների այն տեսակները, որոնք փոփոխության են ենթարկվել: Զեկուցողը համաձայնեց առաջարկի հետ:

Նիստ վարողին և նախագիծը ներկայացնողին հարց ուղղեցին՝

Մեյրան Ղամբարյանը՝ բենզինի և գազի տուրքերի վերաբերյալ:

Խորեն Վարդանյանը՝ տնտեսավարողների կողմից մինչև սույն որոշման ընդունումը վճարված տուրքերի չափերի և սահմանված նոր չափի տարբերության , նաև տուրքերի և վճարների փոփոխության արդյունքում համայնքի բյուջետային քաղաքականության վերանայման անհրաժեշտության վերաբերյալ:

Խորեն Վարդանյանը և Գայանե Քալանթարյանը՝ հեղուկ վառելիքի և տեխնիկական հեղուկների մանրածախ առևտրի տուրքի փոփոխության հետևանքով բյուջեում նվազում կամ հավելում կանխատեսելու վերաբերյալ;

Գայանե Քալանթարյանը՝ ՝՝օրացուցային տարի՝՝ ժամանակային հասկացության և դրա հիման վրա հաշվարկների պարզաբանման և փողոցային բացօթյա առևտուր իրականացնողների համար 1 քառ.մ. տարածքի դիմաց օրավճարի առավելագույն չեմի, հանրային սննդի օբյեկտների ժամը 24.00-ից հետո աշխատելու իրավունքի դիմաց վճարների չափի վերաբերյալ:

Արմեն Մատինյանը՝ փողոցային բացօթյա առևտուր իրականացնողների համար 1 քառ.մ. տարածքի դիմաց օրավճարի նվազագույն չեմի , տաքսի ծառայություն իրականացնողների տարեկան վճարի վերաբերյալ:

Դավիթ Սիմոնյանը՝ արտաքին գովազդի և համայնքի տարածքում հոգեհանգստի և ծիսական ծառայությունների տարեկան վճարի վերաբերյալ:

Հարցերին սպառիչ պատասխաններ տվեց նախագծի մասին զեկուցողը:

Քննարկվող հարցերի վերաբերյալ զեկուցողի առաջարկով պարզաբանումներ ներկայացրեց նաև աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը: Արմենուհի Կյուրեղյանը բացակայեց նիստից քվեարկությունից առաջ մինչև նիստի ավարտը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ընդունվեց որոշում :

5. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի վարձավճարների և համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների սակագները սահմանելու մասին.

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Կարեն Սարոյանը:

Նախագծի մասին լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Ավագանու անդամների կողմից հարցեր չհնչեցին:

Նախագիծը նիստը վարողը դրեց քվեարկության :

Քվեարկությամբ, կողմ՝ 13 կողմ, ընդունվեց որոշում: Արմեն Մատինյանը չէր մասնակցում քվեարկությանը:

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին.

-զեկուցեց՝ աշխատակազմի Ծրագրերի և արտաքին հարաբերությունների բաժնի պետ Լիլիա Դավթյանը:

Նախագծի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Հարցեր ուղղեցին՝

Սոխակ Մելքոնյանը՝ զարգացման ծրագրերի իրականացման ընթացքի վերահսկողական և գնահատման մեխանիզմների վերաբերյալ:

Մեյրան Ղամբարյանը՝ հնգամյա ծրագրում հանրային քննարկման ընթացքում հնչած առաջարկների վերաբերյալ:

Վահագն Ավագյանը՝ քաղաքում կանաչ գոտիների ընդլայնման և նոր խաղահրապարակների կառուցման վերաբերյալ :

Հարցերին զեկուցողի և նիստը վարողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ընդունվեց որոշում

7. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին.

-զեկուցեց աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ՝ Ավագ Ավագյանը:

Նախագծի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Հարցեր չհնչեցին զեկուցողին:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ընդունվեց որոշում:

8. Վանաձորի համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին.

-զեկուցեց՝ համայնքի ղեկավար, նիստը վարող՝ Մամիկոն Ասլանյանը:

Հաշվետվությունը ներկայացվեց ֆիլմի տեսքով: Ներկայացումից հետո կատարողականի մասին ելույթ ունեցավ և գնահատեց այն, Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Հրայր Պապոյանը*: Թեև Հ. Պապոյանը նշեց, որ համայնքը հիմնականում թերացել է սեփական եկամուտների կատարման առումով, սակայն նաև պարզաբանումներ տվեց այս հարցում, նշելով նաև որոշ օբյեկտիվ պատճառների մասին:

Զեկուցողին հարցեր ուղղեցին՝

Սոխակ Մելքոնյանը՝ կառուցված խաղահրապարակների վերաբերյալ:

Վահագն Ավագյանը՝ թափառող կենդանիների վնասազերծման և համատիրությունների աշխատանքի գնահատման վերաբերյալ:

Գայանե Քալանթարյանը՝ աղբահանության ծառայության վիճակի վերաբերյալ:

Նիստը վարողը սպառիչ պատասխաններ տվեց բարձրացված հարցերին:

Նիստը վարողը նախագիծը դրեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 կողմ, ձեռնպահ՝ 1 (*Վահագն Ավագյան*) ընդունվեց որոշում:

9. Տարոն-3 թաղամասի ՔՇՀ-11 թիվ 25 շենքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանների օտարման մասին.

-զեկուցեց աշխատակազմի Համատիրությունների և բնակարանային տնտեսության բաժնի պետ՝ *Էրիկ Ավագյանը:*

Զեկուցողին հարցեր չտրվեցին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13 կողմ, ընդունվեց որոշում: Հայկազ Մովսիսյանը չմասնակցեց քվեարկությանը:

10. <<Հայաստանի խուլերի միավորում>> հասարակական կազմակերպությանը գույքահարկի գծով արտոնություն կիրառելու մասին.

-զեկուցեց աշխատակազմի Գույքի կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ *Կարեն Մարոյանը*

Զեկուցողին հարցեր չտրվեցին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ընդունվեց որոշում:

11. «Լոռի-ջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ին շինություններ և հողամաս տրամադրելու մասին.

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ *Սուրեն Աբովյանը:*

Նախագծի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև նիստը վարողը:

Զեկուցողին հարցեր չտրվեցին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ընդունվեց որոշում:

12. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին.

-զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ *Սուրեն Աբովյանը:*

Պարզաբանման նպատակով զեկուցողին հողի կադաստրային արժեքի մասին հարց ուղղեց նիստը վարողը: Հարցին տրվեց պարզաբանող պատասխան:

Զեկուցողին հարցեր չտրվեցին: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ընդունվեց որոշում:

13. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել ապրիլի 18-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության: Քվեարկությամբ, կողմ՝ 14 կողմ, ընդունվեց որոշում Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2017 թվականի ապրիլի 18-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐԱՑՐԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց

Աշխատակազմի Ք.Տ. և Ա. բաժնի պետ Է. Հովսեփյանը